

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՅԱՅՏ ՄՆԱՅԱԾ ՄԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԴԻՐ ԺԲ. ԴԱՐՈՒ:

Ստորև յառաջ ենք բերում Մ. Աթոռի մատենադարանի Հ. 1209=1239 ձեռագրի յիշատակարանը, որի համաձայն՝ ձեռագրի զրիչը և նորա նիւթ նսայեայ մարդարէութեան մեկնութիւնը կազմողը նոյն անձն են: Հեղանակի աշխատութեան սկզբնագիրն է ուրեմն այս ձեռագիրը, և երևի միակ օրինակը: Գրուած է այն մազաղագիտական բամբակի թղթի վրայ՝ անցման երկաթագիր-բոլորգրով, ութածալ, կաշեկազմ, նորոգուած վերջին դարերում: Երևի նորոգողի կողմից լուսանցքում կարմիր գրով նշանակած են մարդարէութեան զլուխներն ու համարները՝ ըստ տպագրին, և իւրաքանչիւր երեսի համարը դրած: Սկզբից պակաս է միայն նախնորգանքը:

Ո՞վ է Յովհաննէս կրօնաւոր Մուշի որդին՝ ոչ մի յիշատակութիւն չենք գտնում մեր մատենագրութեան մէջ, ոչ էլ նորա ուսուցիչ Թադէոս վարդապետի մասին: Ըստ երևոյթին Վան-Տոսպ գաւառի Մարմետ գիւղում ևս ոչ մի յիշատակարան չի մնացել Թադէոս վարդապետի գերեզմանի, կամ նորա երախտագէտ աշակերտի վերաբերմամբ, որի համար այնքան սուրբ է եղել այդ գերեզմանը, մինչ փոխանակ եկեղեցու կամ մօտակայ մի նշանաւոր վանքի անուն տալու, ինչպէս սովորաբար անում են զրիչները, իւր վարդապետի գերեզմանի հովանու ներքոյ կատարած է յիշում իւր աշխատութիւնը: Գոնէ Մ. Միրախորեանի «Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառն արևելեան Տաճկաստանի» (Կ. Պոլիս, 1884, մասն Բ. եր. 278) Մարմետը նկարագրելիս ոչինչ չի գրում այդ մասին և գիւղի եկեղեցու անունն անգամ չի տալիս:

Բուն գրուածքը, որ կազմուած է ս. Յովհան Ոսկերե-

րանի և ս. Եփրեմ Ասորու Եսայեայ մարգարէութեան մեկնութիւններից՝ առանձնապէս նշանակութիւն կունենայ ս. Եփրեմի մեկնութիւնը վերաբարեկրելու համար, որի բնագրից միայն հասուկտորներ կան պահուած*, իսկ հայերէն թարգմանութիւնը անծանօթ է մնացել զրական-գիտական աշխարհին**։ Թէպէտ Ոսկեբերանի մեկնութեան ամբողջն ևս միայն հայերէն թարգմանութեամբ ծանօթ լինելով և հրատարակուած օրինակը պակասաւոր***, ուղղումներ և լրացումներ կրնգունէ գուցէ այս գրուածքից†։ Սակայն առ այժմ մեր ուշադրութեան բուն առարկան յիշատակարանն է, որ հետաքրքրական տեսութիւններ է ընծայում ժամանակի թէ քաղաքական և թէ եկեղեցական գրութեան նկատմամբ։

ԺԲ. դարի սկզբներից ի վեր 8 դար շարունակ մինչև մեր օրերը գոյութիւն է ունեցել Աղթամարի կաթողիկոսութիւնը, բայց մեր տեղեկութիւնները խիստ սահմանափակ են նորա թէ ծագման և թէ մեր եկեղեցական անցեալում կատարած դերի մասին։ Զարմանալի է, որ ժամանակակից Մատթէոս Ուռհայեցին, ուրիշ դէպքերում շատ խղճմտ և ճշգրտապատում ժամանակագիրը, պատմելով Գրիգոր Գ. Պաշլաւունու հայրապետական աթոռ բարձրանալը 1113 թ.-ին՝ ոչինչ չի յիշում նորա դէմ հակաթոռ կաթողիկոսութեան յառաջանալու մասին, և մենք միայն ժամանակով աւելի կրտսեր Սամուէլ Անեցուց

* O. Bardenheuer, Patrologie. Freiburg in B. 1901. S. 342.

** Զարբն. Հայկական թարգմանութիւնք նախնեաց. Վենետիկ. 1883. եր. 431.

*** Նոյն. եր. 615. Հայկ. Մատենագիտութիւն, Վենետիկ, 1883. եր. 536 շ.

† Մ. Աթուր մատենագրանի շատ ձեռագրներում կայ ԺԳ դարի հեղինակ Գէորգ Սեասցու «Եսայեայ մեկնութիւնը» (տես Զարբն. Պատմութիւն հայերէն դպրութեանց, Վենետիկ, 1865 մասն Ա. եր. 576), որ թէպէտ կաղմուած է դարձեալ ս. Եփրեմի, Ոսկեբերանի, այլ և ս. Կիւրեղ Աղէքսանդրացու մեկնութիւններից, բայց սոցա նախնականը վերականգնելու տեսակէտից շատ աւելի պակաս արժէք ունի։

և ուրիշ յետագայ դարու ժամանակագրութիւններէց ենք իմանում, որ Աղթամարի Դաւթի եպիսկոպոսը Գրիգոր Գ.-ի շատ փոքրահասակ լինելը (ըստ Սամուէլի 15 տարեկան միայն) պատճառ բերելով՝ իւր կողմն է գրաւում Սիւնեաց և Արտաշու նշանաւոր եպիս. աթոռներն ու ուրիշներին, ձեռնադրուում և կաթուղիկոս է նստում Աղթամարում*։ Ապա և՛ միայն Շնորհալու Ընդհանրականի մէջ ենք յիշատակուած գտնում (տպ. Ս. Էջմիածնի, 1865, եր. 65 շ.), որ Գրիգոր Գ. 2500 անձերից բաղկացած մի մեծ ժողով է գումարել Սև լեւան վրայ և բանադրել տուել ս. Լուսաւորչի օրինական յաջորդի դէմ ըմբոստացողներին։— Եւ ահա չորս տարի միայն անցած Աղթամարի այդ հակաթու կաթողիկոսութեան հաստատութեան օրից իւր յիշատակարանը գրում էր Յովհաննէս կրօնաւորը՝ նոյն ինքն ըմբոստացած Դաւթի կաթուղիկոսութեան ժամանակ. ուստի ուշադրաւ է նորա վկայութիւնը, մանաւանդ նորա ցոյց տուած վարանումը՝ որի՞ն ճանաչել արդեօք իսկական հայրապետ։— Դաւթին, որի անմիջական իշխանութեան ներքոյ գտնուում էր ինքը, մի քանի ժամուայ ճանապարհ հեռաւորութեան վրայ միայն նորանից, թէ հեռու «ներքին երկրում» եղող այն միւս կաթուղիկոսին, որ Դաւթին համարում էր «նեխեալ և փտեալ անդամ» եկեղեցւոյ և որի բանադրանքը, ինչպէս Սամուէլն էլ յիշում է, շատ շուտով ազդեցութիւն էր գործել, Դաւթի գլխաւոր կողմնակիցներին հեռացրել և մի նեղ շրջանակ թողել նորա իշխանութեան համար։ Գրիգոր Գ.-ի աթոռի ուր լինելը որոշ կերպով չի նշանակուած յիշատակարանում՝ երևի այն պատճառով, որ այդ ժամանակ հայրապետական աթոռը խիստ անկայուն և աստանդական վիճակ ունէր։ Նախորդ Բարսեղ կաթուղիկոսի վերջին կայանն էր Սև լեւան Շուղր անապատը, որ Անտիոքից հեռու չէր՝

* Սամուէլ քահ. Սնեցւոյ՝ ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1893, եր. 124. Չամչեան՝ Պատմութիւն Հայոց. հատոր Գ. եր. 36 շ. * Վաղարշապատի ժամանակագրութիւն.

նորա հարաւային կողմում, որ և ի նկատի ունի երևի յիշատակարանը: Յիրաւի Գրիգոր Գ. ի աթոռն սկզբները այս անապատում էր, ուր և ինքը սնուել էր, ուր զումարուեց հաւանականաբար յիշեալ ժողովը*։ Բայց արդէն Դաւթի ապստամբութիւնը ցոյց էր տուել, թէ որչափ անպատեհ և վտանգաւոր էր հայրապետական աթոռի մայր երկրից զուրս և կարեւորագոյն կենտրոններից հեռու լինելը, ուստի նա փորձեց Արարատեան երկիրը փոխադրուել, բանակցութեան մէջ մտաւ Անի քաղաքի օտարազգի իշխողի հետ՝ այնտեղ վերադարձնելու համար աթոռը, սակայն յաջողութիւն չգտնելով՝ 1125 թուին հաստատուեց առժամանակ իւր հայրենի Ծովք գրեականում և ապա 1147-ին աւելի տեականօրէն՝ Հռոմկլայում:

Քաղաքական տեսակէտից ամբողջ արեւելքի համար յատուկ կարեւորութիւն ունեցող մի ժամանակակէտ է 1118 թուականը, երբ զրուել է ներկայ յիշատակարանը: Այստեղ յիշուած Տափար սուլտանը, որին նոյն անունով և նոյն թուականին մեռած յիշում է Ուռհայեցին, բայց բոլորովին հակառակ և ժամանակակից օտար պատմիչների համաձայն աւելի ուղիղ բնութագրմամբ անուանելով նորան «այր գաղանամիտ յոյժ», Մելիք-Շահի երկրորդ որդի Գիասսադդին Աբու-Շուջա Մուհամմեդն է, որ պատանի հասակից անընդհատ կռիւ էր վարել իւր երէց եղբայր Բարկիարուխի դէմ՝ իշխանութեան համար, իսկ սորա մահից յետոյ, 1105 թ.-ին, սորա մանկահասակ որդի Մելիք-Շահ Բ.-ից իւր պապ Ալփասլանի կազմած Սելջուկեան հսկայական պետութեան միահեծան իշխանութիւնը: Թոյլ և իւր էմիրներ ձեռքին խաղալիք Բարկիարուխի օրով այս պետութիւնը շարունակ ներքին խռովութիւնների և պատերազմների ապարկ էր եղել ու քայքայուել: Ոչ «բարեբարոյ» ուրեմն և ոչ «խաղաղարար», այլ խիստ նենգաւոր և դաժան, բայց և խիստ վճռական, քաջ ու ոչ մի միջոցի առաջ կանգ չառնող Մուհամմեդին յաջողուեց բոլոր խռովու-

* Տես Սիսուան. Հ. Ղ. վ. Ալիշանի, Վենետիկ* 1885. եր. 406 շ.

թիւններին վերջ դնել, հակառակորդներին սանձել, արեւելեան նահանգներում տեւական խաղաղութիւն հաստատել, արեւմտեան՝ կենտրոնական իշխանութեան ազդեցութիւնից որոշ չափով ելած մասերում զգալ տալ իւր բազկի ոյժը, և այսպէս վերջին անգամ վայելցնել ամբողջական փառքն ու զօրութիւնը մեծ Սելջուկների թագաւորութեան: Այս տեսակէտից ահա Յովհաննէս կրօնաւորն իրաւամբ նորան «շինող աշխարհի» անուանել կարող էր և նորա իշխանութիւնն զգալ իբրեւ բարիք նորա տիրապետութեան ներքոյ գտնուած երկրների համար*:

Բողորովին ուղիղ է յամենայն դէպս յիշատակարանի այն դիտողութիւնը, թէ Մուհամմեդի մահը ազդանշան եղաւ նորա զօրեղ ջանքերով ժամանակաւորապէս զսպած խռովութիւնների ամէն կողմից կրկնապատիկ սաստկութեամբ զլուխ բարձրացնելուն: Նորա վաղաժամ մահով իշխանութիւնը մնաց իւր անչափահաս որդիներին, և թէպէտ նորա Սինջար եղբայրը զէնքի ոյժով ստիպեց ամբողջ պետութեան իշխանապետ ճանաչել իրեն և մինչև մահը (1157 թ.) պահեց այդ պատիւը, թէպէտ իբրեւ ընդունակ, քաջ և խիստ կարող անձնաւորութիւն՝ նա ձեռնհաս էր գուցէ եղբօր կազմակերպածը պահպանելու, բայց հոգ էր տանում միայն իւր անմիջական տիրապետութեան ներքոյ գտնուող ծայրագոյն արեւելեան երկրների մասին, որոնք և խաղաղ ու ապահով մնացին. մինչ արեւմտեան նահանգների խսկական տէրերը դարձան զանազան աթաբէկներ և էմիրներ, որոնք հետզհետէ կազմակերպեցին սեփական իշխանութեան կիսանկախ և անկախ հարստութիւններ. այնպէս որ Տափար-Մուհամմեդի մահով Սելջուկեան մեծ պետութեան իրական քայքայումն սկսուեց. «ազգ ազգի և թագաւորութիւն թագաւորութեան վերայ» ելնելով՝ թոյլ չտուին այլ ևս, որ նա վերականգնի երբէք նախկին ամբողջութեամբ: Ասպարէզն ազատ էր այնուհետև այն թուրքմէն հրոսակների

* *Shu.* Der Islam im Morgen- und Abendland. — Dr. A. Müller. Berlin, 1887. II Band. S. 120 ff.

Համար, որ Մուհամմեդի մահից անմիջապէս յետոյ ապատակել են Վասպուրականը և որոնց մասին ուրիշ տեղ յիշատակութիւն չենք գտնում: Նոքա անվերջ էին, և նոցա գտած յաջողութիւնները, նորանոր երկրների տիրելն ու մի ճոխ քաղաքակրթութեան աւերակների վերայ իրենց մակաբոյծ տիրապետութիւնը հաստատելը՝ զրաւում էր բնիկ հայրենիքից նորանոր խմբերի և ցեղերի, մինչև որ մի դար յետոյ թուրքեստանի խորքից ելաւ, Հայաստանի վրայով մինչև Փոքր-Ասիա յառաջեց և չնչին միջոցներով կարճ միջոցում մեծ զօրութեան և իշխանութեան հասաւ այն ցեղը, որին վիճակուած էր ամենից աւելի խոր մխուել և ամենից հաստատուն ու երկարատեւ տէրութիւն հաստատել քաղաքակիրթ-քրիստոնեայ արեւմուտքում:

Այժմ, երբ մենք կանգնած ենք դարձեալ մի խիստ կարեւոր ժամանակակէտի վրայ, երբ մարդկութեան պատմական կեանքի ղեկավար Իմաստութեան տնօրէնութեամբ՝ Սելջուկեան վերջին ժառանգ Սամանեան թուրքերէ՝ օրհասական պայքարը և անխուսափելի նահանջն է տեղի ունենում քրիստոնեայ արեւմուտքից, արժէ կարգալ հակիրճ և ճշգրիտ բնորոշումը նոցա նախահայրերի՝ մի համեմատ հայր կրօնաւորի զբի տակ. տեսնել, թէ ինչ տպաւորութիւն են թողել մեր երկրում այդ «անաւրէն հարամիք» իրենց առաջին ասպատակութիւնների միջոցին և թէ ինչպէս նոցա աշխարհաւեր ընթացքից առաջացած այսքան դարերի պատմութեան մէջ շատ բան փոխուելով մի բան միշտ նոյնն է մնացել, այն, որ այսօր էլ եւրոպական մեծ թերթերի թղթակիցները նոցա ժառանգորդների նահանջման թողած հետքերը յար և նման խօսքերով են նկարագրում, ինչ որ 8 դար առաջ խեղճ Յովհաննէս կրօնաւորը նոցա յառաջխաղացումն էր նկարագրել. «եւ ըստ վաղուց որջացեալ և հնացեալ կտաղտութեանն իւրեանց, զոր ունին ի վերայ խաչապաշտաց... զբազումս անողորմաբար և առ ի պաշտաւն մատուցանել կոտորեցին»: Եւ սակայն քրիստոնեայ արեւմուտքի մի ամենիմաստ եւրոպական քաղաքակրթութիւն կայ, որ ամեն ճիգ գործ է դնում այսօր

«անաւրէն հարամիներին» իրենց նստած տեղերում պինդ պահելու, նոցա «որջացեալ և հնացեալ կատաղութիւնը» յաւերժացնելու՝ սպառնալով ամբողջ քաղաքակիրթ աշխարհը արեամբ ողողել, եթէ շարունակուի այդ սիրելի հարամիների արտաքսումն իրենց որջերից:

Ի դէպ՝ թող ներուի ինձ յառաջ բերել այստեղ մի զարմանալի գուշակութիւնը իմ հանգուցեալ ականաւոր ուսուցչապետ (Հալլէում) Ա. Միլլէրի, որ նոյնքան պարզ և պատուական մարդ էր, որքան բազմակողմանի և խոր գիտնական, որ «Խսլամը արեւելքում և արեւմուտքում» վերեւ յիշատակած իւր հմտալից աշխատութեան մէջ (հատոր Բ. եր. 322) այսպէս էր զրում 25 տարի առաջ Օսմանեան պետութեան մասին. «Վերջին տեսարանն է այս մի պարզ, թէպէտ փոքր ինչ երկարաձգուած՝ յագնեղութեան, որին ներկայ ենք այժմ, որ վերջ կունենայ նոյն բոպէին, երբ եւրոպական պետութիւնները համաձայնութեան գան մահմեդական պետութիւնները նոր գաղութականութիւնների համար իրենց մէջ բաժանելու: Ամեն որ զիտէ, որ զժբաղդաբար հեշտութեամբ զլուխ չի գայ այդ. ուստի և մահմեդական արեւելքի՝ երբեմնական ջղաձգութիւններով միայն ընդհատուող, փայտացումը ի մահ մի առժամանակ էլ կտեւէ, մինչև որ մի ըուզարական կամ աֆղանական քար ամբողջ հիւսիս զլորման պատճառ դառնայ»:—«Ահա և Բուլղարական քարը» զլորուած՝ շարժել է տեղից ձեան հիւսը: Դէպի ո՞ւր պիտի զլուի այն և որչափ նոր կեանքեր, շինուածներ, մշակուած տափաստաններ ու ծառաստաններ տակովն անէ... ցոյց կտայ մօտիկ ապագան:

Կ. Եւպ.

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն.

(Մ. Աթոռի մատենադարանի տպ. ցուցակի չ. 4209=4259 ձեռ. եր. 445).

Փնոք ամենասուրբ Երրորդութեանն՝ անխմանալի և անհատանելի իմաստութեանն, Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, այժմ

և միշտ և յաւիտեանս յաւիտենից, որ արժանի արար դանարժանս գրել զաստուածախաւս զտառս սրբոյն Եսակա մարգարէին, առ որս և համարձակախաւս եղեալ քան զամենայն մարգարէսն, ի քառահոլով շրջմունս արեգակնածագ փայլողութեանն, ծաղկեւրանգ վայելչութեամբքն, (Եր. 414) գունագեղ գեղեցկութեամբն՝ զտեսողսն հրճուալից ուրախութեամբ առնու, համովք և հոտովք խրախացուցանելով՝ որք ի բաց եղեալ զաշխատութիւնս մարմնոյ, ընդ ծայրս լիւրանց ճեպեալ և ի հովիտս դաշտացն քայլայեղ արագութեամբն ժամանեալ՝ միահաւաք խրճնեալ զընտիր ընտիրսն ի գոյնս և ի հոտս, զանուշական բերեալ մատուցանեն քաջ սիրելեացն և հարազատ ընդանեացն, կամ ճոխ ազանցն թագազարմեա զարմիցն: Զի և յոլովադոյք են յարմատոյ բուսոցն, որք ըստ բժշկական արհեստիցն ախտից են փարատիչք և ցաւոց մերժիչք:

Այսպիսի աւրինակաւ և իմ ի բաց եղեալ զաշխատութիւն մարմնոյ և միահաւաք խրճնեալ զանուշակաւ ծաղկանց, որ ցանկալի է ինձ քան զոսկի և քան զականս պատուականս, և լուսատու քան զլոյս արեգական: Արդ, աւրէնք Տեառն աւրինաւորութիւն մտաց առաւել գերապատուեալ գերազանցիցն ողբով քան զստորաքարշ մարմնասիրացն հոգածութիւնս առողջութեան: Արդ, մեծի և հզաւրիս Եսայեայս երջանկութեան երկնաբերձ բարբառ աւետարարող ազգմամբ բոլոր ազանց ազգեալ՝ բարձր քարող նորոյ Սիոնի յութեակ շրջագայութեանն աւուր:

Արդ, ես Յոհաննէս մեղաւոր և անպիտան կրաւնաւոր, որդի Մուշին և աշակերտ սուրբ վարդապետին Թադէոսի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի. որ մեծաւ ցանգութեամբ ի խնդիր եղէ ծածկեալ դանձիս Եսայիտ, որով նախ Իսրայէլեանն պայծառանայր ժողովուրդ, ազաւտատեսիլ խորհրդածութեամբ, և ըստ յաջողելոյն Աստուծոյ հանգիպեցան ինձ երկոքին հատածքն, զոր լուսաւոր բացայայտութեամբ մեկնեաց Յոհան Ոսկեբերանն, (Եր. 415) և լցի զծարաւ իմ. ես ինքն իւրովի համառաւտեցի ըստ իմում կարի՝ ի նուաստ նիւթ ըստ աղքատութեան, ի խոշոր գիր վասն տկարութեան: Եւ վասն զի պակաս և թերի էին բանք բարբառոյ հոգեազարդ առն Եփրեմի, վասն զի նման մարգարէիցն խաւսեցաւ զմարգարէսն, նոյն հոգւով՝ կարճառաւտ վերափայլութեամբ. արդ, իմ խառնեալ և եղեալ առ միմիանս զբանս երկուց լուսատու արեգակացն՝ Յովհաննու և Եփրեմի:

Արդ, որք ընթեռնուք և լուսաւորիք ի սուրբ մարգարէէս և ի լուսաւոր բանից սուրբ վարդապետացս, վասն տգեղութեան գրոյս մի՛ յիմոցս զիս դատապարտեր, այլ ըստ քո բարի կամացդ ասա թէ՛ Տէր Աստուած, թող զգրողին մեղքն և ողորմեաց նորա

հոգւոյն ի քո գալստեանդ, ամէն: Արդ, որ այսպէս ասէ, աւրհանակ լիցի յամենակալ Տեառնէ Աստուծոյ:

Եւ գրեցաւ ի Շկէ. թուականիս Հայոց՝ ի գեւղս, որ կոչի Մարմետ, ընդ հովանեաւ սուրբ գերեզմանի վարդապետին Թադէոսի, ի հայրապետութեանն Տեառն Դաւթի Հոռոց կաթաղիկոսի ի Վասպ. յորում կայր և այլ կաթաղիկոս ի ներքին երկրին, մերձ ի յԱնտիոք. արդ, եթէ ո՞ր ճշմարիտ է, կամ ո՞ր սուտ՝ զայն Աստուած գիտէ.— և ի բռնակալութեանս ազգիս Իսմայելացւոց, յորում ամի եղև նշանք ահագինք յերկնէ և յերկրէ և յաւդոց՝ ի կարմրանալ երկնից ի գոյն արեան և թաւթափումն աստեղացն յայտնի տեսեամբք, և շարժմունք մի զմիոյ կնի. և մեռանել սուլտանին, որ կոչէր Տափար, առն բարերարոյ և խաղաղարարի և շինողի աշխարհի: Եւ ապա զկնի այնր յառնել ազգ յազգի վերա և թագաւորութիւն ի թագաւորութեան վերա, (եր. 416) և ասպատակել անաւրէն ազգին Իսմակի, որ կոչի Թուրքման, և մականուն՝ հարամիք, ի գեղապանձ գաւառս Վասպուրականի: Եւ ըստ վաղուց որջացեալ և հնացեալ կատաղութեանն իւրեանց, զոր ունին ի վերա խաչապաշտաց, նորոգեալ ի վերա Տոսպ գաւառիս՝ զբազումս անողորմաբար և առ ի պաշտաւն մատուցանել կոտորեցին, թերևս թոյլ տալով Աստուծոյ, վասն զի ոչ ամենեքեան, որ յիսրայէղէ են՝ նոքա Իսրայէղեանք իցեն: Բայց զառաջիկայն չգիտեմք, թէ զի՞նչ է լինելոց. զոր գթացեալ Որդին Աստուծոյ պահեսցէ խաղաղութեամբ զեկեղեցի իւր սուրբ և փրկեսցէ յայս ի բազում և յանոռն տարակուսանացս, որ եմք յանտանելի հարկապահանջութեան և յառի և յաւարի, բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց և կամաւորաց իւրոց. նմա փնոք յաւիտեանս. ամէն:

